ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ
LILIT AVETISYAN

ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գրաբարի անվանողական կայուն կապակցությունների (հետայսու՝ ԿԿ) մեջ գերակշիռ մեծամասնություն են կազմում բայական կապակցությունները[1], որոնք բնութագրվում են ընթացային-հատկանշային իմաստով[2]:

Առհասարակ ԿԿ-ների իմաստաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդօրինակ կապակցությունները որպես լեզվական միավորներ, ենթարկվում են ընդհանուր իմաստաբանական օրենքներին (կանոններին). ԿԿ-ներն ունեն միմյանց հետ համակարգային իմաստային հարաբերությունների մեջ մտնելու ներունակություն[3]: Ներկա հոդվածում գրաբարի մակարդակում քննարկվում են բայական ԿԿ-ների միջև առկա իմաստային (մասնավորաբար հոմանշային) հարաբերությունները[4]: Ներկայացվում են բայական հոմանշային ԿԿ-ների ըստ իմաստային հատկանիշների և հուզարտահայտչական տարբերությունների առանձնացվող տեսակները, դիտարկվում են խնդրո առարկա ԿԿ-ների հոմանշային երկանդամ և բազմանդամ շարքերը, ինչպես նաև վեր են հանվում հոմանշություն և խոսքային միջավայր առնչակցությունները[5]:

---

[1] ԿԿ-ների մասին տես Պ. Ա. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973, էջ 31, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., ՀՊՄՀ, 1990, էջ 3, 5, Ա. Ս. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 1999, էջ 297: Բայական ԿԿ-ների մասին տես Ա. Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., ՀՍՍՌ ԳԱ, 1959, էջ 7, Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարաժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 186:

[2] Բայիմաստը բովանդակում է առարկայի փոփոխային հատկանիշի ամենատարբեր դրսևորումները՝ շարժում տարածության մեջ, ֆիզիկական գործողություններ, մտավոր – հոգևոր գործողություններ, առարկայի վիճակն իբրև գործընթաց և այլն:

[3] ԿԿ-ներին բնորոշ է նրանց իմաստների դասակարգումն ըստ այն հարաբերությունների, որոնք առկա են կամ ԿԿ-ների ներսում նրանց իմաստային կառուցվածքում, կամ այդ կարգի միավորների միջև: Ընդհանրապես ներբառութային և միջբառութային իմաստային հարաբերությունների մասին տես Լ.Մ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Ե., «Զանգակ – 97» հրատ., 2008, էջ 139-145:

[4] Բայական ԿԿ-ների ներսում առկա իմաստային հարաբերությունների, այլև հոմանշություն և բազմիմաստություն, հականշություն և բազմիմաստություն աղերսակցությունների մասին տես մեր հոդվածը Գրաբարի բայական դարձվածային միավորների բազմիմաստությունը, Միջազգային գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2011, էջ 30-37:

[5] Մեր ուսումնասիրության ծիրի մեջ են թե հինհայերենյան (պատրաստի վերարտադրելի) ոչ փոխաբերական հարադրական բայերի, թե միաբևեռ դարձվածային միավորների (այսուհետև ԴՄ) և թե իդիոմների միջև առկա իմաստային (հոմանշային) հարաբերությունները:

Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ հոմանիշներ են համարվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք տարբեր են ձևային կողմով, իսկ իմաստային առումով կամ նույնական են, կամ ունեն նրբերանգային, հուզարտահայտչական կամ ոճական և գործառական տարբերություններ[6]: Թե բառային, թե դարձվածային հոմանիշների մեջ տարբերակվում են հետևյալ տեսակները 1. հասկացական հոմանիշներ, որոնք աղերսվում են միմյանց միևնույն նշանակության իմաստային տարբեր նրբերանգներով, ունեն տարբեր ձև, ընդհանուր նշանակություն, 2. ոճական հոմանիշներ, որոնք գործառվում են խոսքի տարբեր ոճերում կամ դրսևորում են հուզարտահայտչական տարբերություններ[7]:

Ա. Բայական հոմանիշ ԿԿ-ների դասակարգումն ըստ իմաստային հատկանիշների և հուզարտահայտչական տարբերությունների: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է հոմանիշ ԿԿ-ների երեք տեսակ 1. տարբեր կառուցվածքով, բայց ընդհանուր անդամով հոմանիշ ԿԿ-ներ կամ հոմանշային տարբերակներ, 2. տարբեր բառային կազմով հոմանիշ ԿԿ-ներ կամ բուն հոմանիշներ, 3. ոճական հոմանիշներ[8]:

Ընդհանրապես ԿԿ-ների, մասնավորապես գրաբարի բայական ԿԿ-ների **հոմանշային տարբերակները**[9] հաճախ միևնույն իմաստն են արտահայտում հանդես գալով որպես **նույնանիշներ**:

Հմմտ. **թպամամ // կտտամամ առնել // սատակել** (տանջանքներով սպանել), **չարամամ հրամայել // առնել** (չարաչար մահով սպանել), **բառնալ զգլուխ // զկենդանութիւն, մատնել ի մահ // ի կորուստ** (սպանել), **զօրաժողով առնել // լինել (իմ), գումարտակ առնել // դնել** (զորք հավաքել և նախապատրաստվել պատերազմի), **զահի // զդողի հարկանել, ահ // սարսուռ առնուլ** (վախենալ սարսռել), **թափել կապուտ // աւար (բազում)** (կողոպտել թալանել), **ասպատակ առնել // սփռել** (ասպատակախումբ ուղարկել ասպատակել), **ի բաց առնել // կացուցանել // անցուցանել** (հեռացնել հեռու

Մասնավորաբար միաբևեռ ԴՍ-ների և իդիոմատիկ արտահայտությունների մասին տես Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1986, էջ 81, Л. П. Смит, Фразеология английского языка, М., Учпедгиз, 1959, էջ 162:

[6] Հմմտ. Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., ԵՊՀ, 1984, էջ 67, Վ. Ղ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ, 1979, էջ 201:

[7] Հմմտ. М. И. Фомина, Русская лексика и фразеология, ч. 1, М., МПИ, 1965, էջ 26:

[8] Տես О. М. Неводимская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, АКД, Ленинград, ЛГУ, 1973, էջ 7, И. И. Чернышева, Фразеология современного немецкого языка, М., «Высшая школа», 1970, էջ 81:

[9] Այդօրինակ տարբերակներ կարող են ձևավորվել նաև այնպիսի բառերով, որոնք ազատ կիրառություններում չունեն հոմանշային հարաբերություններ, սակայն արտահայտում են իմաստային միևնույն դաշտի հասկացություններ կամ միևնույն հատկության որակի կրողներն են:

պահել), լու // **ազդ առնել** (իմաց տալ տեղեկացնել), **պաշտօն // սպաս տանել (իմ) // ունել (իմ), սպասաւորութիւն հարկանել // մատուցանել // լնուլ** (հոգ հանել ծառայել), **խօսս առնել // դնել** (շարադել), **անցանել բանիւ // գրով** (խոսել պատմել շարադրել), **ի մատենի հարկանել // տալ, ընդ գրով արկանել // սահմանել** (գրի առնել), **ելանել ընդ չափ // անցանել ըստ չափ** (չափը սահմանն անցնել), **ձայն ածել // բառնալ // շարժել** (լեզու բանեցնել խոսել) և այլն:

Գրաբարի բայական ԿԿ-ներում առկա են նաև բուն **հոմանիշներ** կամ **համանիշներ**, որոնք կազմվում են տարբեր բառային միջոցներով, ունենում են իմաստային և հուզարտահայտչական տարբերություններ: Հմմտ. ստորև բերվող բայական հոմանիշ ԿԿ-ները, որոնք դրսևորում են իմաստային-աստիճանական տարբերություններ. **Զդողի հարկանել, ընդ ահիւ անկանել (իմ), սարսուռ առնուլ, քստմունք գնալ ընդ անդամսն, սարսափիւն գալ զոսկերօքն** (վախենալ, սարսռել, սարսափել):

Սպաս ունել (իմ), պատուել որպէս զիշխան, ի պաշտօն առնուլ, պաշտել որպէս զկայսր, երկրպագել իբրև տեառն, իբրև զԱստուած փառաւորել (պատվել, պաշտել, երկրպագել): **Ի վէգ գալ, խազմ առնել, կռուել ցմահ, արեամբ քրտամբ չափ մարտնչել** (վիճել, պայքարել, մարտնչել):

Հետևյալ բայական հոմանշային ԿԿ-ները ցուցաբերում են հուզարտահայտչական տարբերություններ. **Դատել(իմ) յոգի, վճարել(իմ) ի կենաց, առնուլ զկերպարանս մահու, տապաստ անկանել(իմ), թոպամահ լինել(իմ), իբրև զշուն մեռանել** (շունչը փչել, մեռնել, սատկել): **Առ աչս պարծել, մեծամեծս փքալ, եղջիւր ածել** (արտաքուստ պարծենալ, հոխորտալ): **Որպէս փախստէից հետամուտ լինել(իմ), զհետ մտանել որպէս առիւծ ընդ նապաստակ** (հետամտել, համառորեն հետապնդել)[10] և այլն:

ԿԿ-ների շրջանակներում առկա ոճական հոմանիշները հատկանշվում են լեզվի գործառական տարբեր ոճերում ունեցած կիրառությամբ: Հմմտ. **Ակնակառոյց լինել(իմ)** (խսկց.), **ոգւով չափ սիրել** (գր.) - աչքը վրան մնալ, չափազանց շատ սիրել: **Դաշնաւոր լինել (իմ)** (համագործած.), **դարձուցանել զսուր ի պատեան** (գրք.) - դաշինք կնքել:

Մրուր տալ (խսկց.), **թշնամանս դնել** (համագործած.), **խօսել(իմ) իբրև ընդ տղայս** (արհամարհ.), **ընդ երեսս թքանել** (գռհկ.), **բանիւք խոցել որպէս սրով** (գրք.) – նախատել, անարգել և այլն:

---

[10] Վերը բերված համանշային զույգում առկա են համեմատություն-դարձվածային միավորներ (ՀԴՄ):

ՀԴՄ-ները պատկերավորության հիման վրա առաջացած ստորադասական (երբեմն՝ համաստորադասական) կայուն, պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերաիմաստավորված կապակցություններ են: Վերջիններս հոմանշային հարաբերության մեջ կարող են մտնել ինչպես միմյանց հետ կազմելով յուրօրինակ կառուցվածքային հոմանիշներ, այնպես էլ այլ ԿԿ-ների հետ:

Բ. Բայական ԿԿ-ների հոմանշային շարքերը: Ինչպես բառերի, այնպես էլ ԿԿ-ների հոմանշային շարքը համաժամանակյա (սինխրոնիկ) լեզվական իրողություն է, որը կազմված է երկու կամ ավելի ԿԿ-ներից: Լեզվաբանական գրականության մեջ «հոմանշային շարք» տերմինից բացի կիրառվում են նաև «հոմանիշների փունջ» կամ «հոմանիշների բույն» տերմինները[11]: ԿԿ-ների հոմանշային միևնույն շարքի անդամները կարող են ունենալ ձևաբանական և շարահյուսական տարբեր կառուցվածք, բաղադրամասային կազմ և գործածության հաճախականություն, ինչպես նաև նրբիմաստային տարբերություններ[12]: Գրաբարի բայական ԿԿ-ների հոմանշային շարքերը քանակային առումով կարող են տարբեր լինել՝ ներառելով երկուսից մինչև յոթ, երբեմն ավելի ԿԿ-ներ: Խնդրո առարկա ԿԿ-ների հոմանշային շարքերի մեջ մեծամասնություն են կազմում երկու, երեք և չորս ԿԿ-ներ ընդգրկողները: Ստորև բերվում են բայական ԿԿ-ների հոմանշային երկանդամ շարքեր կամ հոմանշային զույգեր.

Նախանձ արկանել, նախանձաբեկ առնել (նախանձը շարժել):

Բառնալ թողուլ, անփոյթ առնել (ուշադրություն չդարձնել, չհոգալ, չջանալ):

Անցանել ըստ հրաման, կապարճս դարձուցանել (չենթարկվել, ապստամբել):

Համար առնել, արկանել ընդ թուով (հաշվել, հաշվառում կատարել):

Ապաստան լինել(իմ), թիկունս առնել (մեկին իր համար օգնական, պաշտպան դարձնել, մեկի պաշտպանությանն ապավինել):

Ի մտաց անկանել (իմ), մոռացօնս առնել (հիշողությունից զրկվել, մոռանալ):

Աշխատ առնել, արկանել ընդ վնասիւք (նեղություն պատճառել, վնասել):

Մատնել զանձն ի կորուստ, յանգիւտ կորուստն յուղարկել(իմ) (անդառնալի կորստյան մատնվել) և այլն:

Հմմտ. բայական ԿԿ-ների հոմանշային եռանդամ շարքերը.

Նկուն ելանել, յամօթի լինել(իմ), դսրովեալ լինել(իմ) (անարգվել, խայտառակվել):

Ձկնի լինել(իմ), զհետ մտանել, հալածական առնել (հետապնդել, հալածել):

Գրոհ տալ, ասպատակ սփռել, վարել յաւարի (ամբոխով ներխուժել, ասպատակել):

Պահանջել զարիւն, վրէժ խնդրել, առնուլ զվրէժխնդրութիւն (սպանվածի համար հատուցում պահանջել, վրեժ լուծել):

Գան հարկանել, առաթուր առնել, առ ոտն կոխել (ոտնատակ անել, ծեծել):

Ստորև բերվող հոմանշային շարքերն ընդգրկում են չորսական ԿԿ.

---

[11] Տե՛ս Ա. Մ. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., Եր. համալս. հրատ., 1971, էջ 135:

[12] Հմմտ. Л. Д. Игнатьева, Синонимические отношения фразеологизмов с компонентом «как» качественно – обстоятельственной семантики, Сб. Вопросы фразеологии современного русского языка, Челябинск, ЧГПИ, 1975, էջ 64, 70:

Առաջս առնուլ, առաջի արկանել, հաւ առնել, ձեռն ի գործ արկանել (սկսել, ձեռնարկել):

Արկանել ի սուր սուսերի, հանել ընդ ցից, բառնալ զգլուխ, ի հող դարձուցանել (սրի քաշել, գլխատել, սպանել):

Յուղի անկանել (իմ), չու առնել, հատուած գնալ, թափել յերկրէ (ճանապարհվել, տեղափոխվել, գաղթել):

Բանալ զբերան, ծայն ածել, արկանել զբանիւք, անցանել բանիւ (խոսել, պատմել) և այլն:

Իր ընդգրկունությամբ աչքի ընկնող հոմանշային շարքերից է «զորք հավաքել և նախապատրաստվել պատերազմի» ընդհանուր իմաստով հոմանիշ ԿԿ-ների հետևյալ փունջը. **Զօր հատանել, գումարտակ դնել, լակիշ ածել, զօրաժողով առնել, ճակատ յօրինել** - 5 ԿԿ:

Խօսս առնել, անցանել բանիւ, յինքն առնուլ, գրով դրոշմել, ընդ գրով արկանել, ի մատենի հարկանել (պատմել, շարադրել) հոմանշային շարքը ներառում է վեց ԿԿ: «Չափազանց շատ սիրել» ընդհանուր իմաստով է հանդես գալիս ստորև բերվող հոմանիշների փունջը, որն ընդգրկում է յոթ ԿԿ:

Զնորա սիրովն գալ, յակն առեալ սիրել, սիրել ըստ անձին, հարկանել ի կնոջ, ակնկառոյց լինել(իմ), ի հիացման լինել(իմ), ոգւոյ չափ սիրել:

Հմմտ. նաև հոմանշային բազմանդամ հետևյալ շարքը. **Խօսել(իմ) իբրև ընդ տղայս, ընդ վայր հարկանել, ի բաց մերժել, յետս ընկենուլ, զթիկունս դարձուցանել, ոտնհար լինել(իմ), մրուր տալ, ծանակ առնել, ապախտ առնել, թշնամանս դնել, բանիւք խոցել որպէս սրով, ընդ երես թքանել** (մերժել, արհամարհել, ծաղրել, անարգել) – 12 ԿԿ:

Առավել շատ հոմանիշ ԿԿ-ներ ունեցող շարքերից է «մեռնել» ընդհանուր իմաստով հոմանիշ ԿԿ-ների հետևյալ փունջը. **Անկանել(իմ) ի ձեռն սրոյ, տապաստ անկանել (իմ), իբրև մարդիկ մեռանել, իբրև զշուն մեռանել, թոպամահ լինել(իմ), անկանել(իմ) ընդ մահուամբ, առնուլ զկերպարանս մահու, վճարել զկենցաղս, լուծարել ի կենաց, առնուլ զհրաժեշտ մեղանչական կենցաղոյս, անկանել(իմ) յարէ, դատել յոգի, յաշխարհէս ելանել, յաճիւն վախճանել, ի հաւիտենական հանգիստ մտանել, ի հող դառնալ** – 16 ԿԿ:

Գ. Հոմանշություն և խոսքային միջավայր: Ընդհանրապես գեղարվեստական երկերում առավել ցայտուն են արտացոլվում հոմանշային ԿԿ-ների իմաստային նրբերանգները, հուզարտահայտչական տարբեր գունավորումները, ոճական-գործառական պատկանելությունը և կապակցելիության տարբերությունները: Հմմտ. բայական ԿԿ-ների հոմանշային տարբերակները խոսքային միջավայրում. Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտագդ ծննդականութիւն, որ ի սկզբանցն մերոց ազգաց մինչև ցայժմուսս միայն գտար զայսպիսւոյ մեծէ իրէ բուռն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել .....

և զգործս և զժամանակս իւրաքանչիւր **գրով դրոշմել** (Խոր., I, Գ): Բազում եւ այլ եւս յանարժան հարուածս չարչարեին, զոր եւ ոչ **ընդ գրով** իսկ արժանի համարեցաք **արկանել** (Եղ., II յեղանակ): Արդ զի նչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կործանումն քրիստոնէից **ընդ գրով սահմանել** (Լաստ., ԺԶ):

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, ընդգծված ԿԿ-ներում առկա են ձևային մասնակի անհամապատասխանություն և իմաստային նույնականություն: Հետևյալ համատեքստերում առկա են համանշային բայական ԿԿ-ներ. Եւ նա առ վշտին ոչ **բանաց զբերան** իւր (Ղեւ., 76): Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտասջիր զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն **ծայն ածէ** ընդ քեզ, եւ զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ (Բուզ., IV, ԾԳ): Եւ **ի չու արարեալ** յԱտրպատականէ գնայ յԱսորեստան (Սեբ., ժ): Հատուած **գնացեալ** Վարդգէս մանուկն .... Կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի (Խոր., II, Կե): Եւ սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ և **գալ ի** ծառայութիւն Պարսից (Սեբ., ԺԳ): Այլ արդ եթէ հաճոյ թուի անձանց ձերոց ընկալարուք զխրատ իմ, զի այս լինի ելք գործոցդ, կամ դառնալ ձեզ և **մտանել ընդ հնազանդութեամբ** նոցա, և կամ մերժիլ փախստեամբ համօրէն ընտանեօք յերկրէս ձերմէ (Ղեւ., ԼԴ):

Ինչպես տեսնում ենք, բայական ԿԿ-ների վերը բերված բուն հոմանիշները կամ համանիշները ձևային տարբերություններից բացի դրսևորում են նրբիմաստային կամ նրբերանգային տարբերություններ: Հմմտ. մասնավորաբար իմաստային-աստիճանական տարբերություններ ի հայտ բերող հոմանշային ԿԿ-ները խոսքաշարում. Ոչ անսայր նմա Ադամ, այլ խորհեալ **ի բաց մերժեր** (Եզն., 245): Այլ **ապախտ առնէիք** զխորհուրդս իմ, եւ յանդիմանութեանց իմոց ոչ անսայիք (Առակ Ա.): Ոչ եղև ձեռնամուխ **մատնել ի սուր անողորմ** (Ղեւ., 110): Յաղագս թէ որպէս զդիւթսն եւ զքաւութեայսն հարցեալ Շապհոյ փորձէր զմիտս Արշակայ եւ կամ զՎասակ սպարապետն Հայոց **չարամահ** հրամայէր առնել (Բուզ., IV, ԾԴ):

Ուշագրավ են նաև ԿԿ-ների ոճական հոմանիշները, որոնց ոճական-գործառական կամ հուզարտահայտչական տարբերություններ դրսևորելու ներունակությունն ի հայտ է գալիս հենց խոսքային միջավայրում: Հմմտ. Դաշինս անաւրէնութեան **ուխտեալ** առ իշխանին իւրեանց երդմամբ **չդարձուցանել զսուր ի պատեան** մինչև ի մէջ աշխարհիս (Ղեւ., 20):

Վասն դոյզն յանցմանն **անկանէր ընդ մահուամբ** (Եզն., 73): Եւ իսկոյն առեալք **զիրաժեշտ մեղանչական կենցաղոյս փոխեցան ի հանդերձեալ յուսոյն** ակնկալութիւնն երանելի և քաջ նահատակքն (Ղեւ., 150): Քանզի **իբրև զշուն** մեռաւ (Եղ., VI յեղ.):

Այսպիսով 1. Ըստ իրենց ընդհանուր իմաստի ԿԿ-ները համախմբվում են հարաբերակցվելով այս կամ այն խոսքի մասին: Խնդրո առարկա կա-

պակցությունների այդօրինակ խմբերը տարբերակվում են իմաստային – քերականական առանձնահատկություններով:

2. Գրաբարի ԿԿ-ներում գերակշիռ մեծամասնություն են կազմում բայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող միավորները, որոնք կարելի է քննել ոչ միայն բաղադրիչների կառուցվածքային – քերականական առումներով, այլև իմաստաբանական հայեցակետից:

3. ԿԿ-ների միջև ընդհանրապես, բայական ԿԿ-ների միջև մասնավորապես առկա են իմաստային տարաբնույթ աղերսներ: Այդօրինակ կապակցություններն ի հայտ են բերում ոչ միայն ներկապակցական (մենիմաստություն և բազմիմաստություն), այլև միջկապակցական (հոմանշություն և հականշություն) իմաստային հարաբերություններ:

4. ԿԿ-ների հոմանշային շարքը համաժամանակյա լեզվական իրողություն է, որն ընդգրկում է երկու կամ ավելի կապակցություններ: Հին հայերենյան բայական ԿԿ-ների հոմանշային շարքերում հանդիպում են ինչպես հոմանշային զույգեր, այնպես էլ այդօրինակ բազմանդամ շարքեր:

5. Գրաբարի բայական ԿԿ-ներում առանձնացվում են ա. հոմանշային տարբերակներ կամ նույնանիշներ, բ. բուն հոմանիշներ կամ համանիշներ, գ. ոճական հոմանիշներ:

6. Բայի խոսքիմասային արժեքով առանձնացող հոմանշային ԿԿ-ների իմաստային ընդհանրություններն ու նրբիմաստային, հուզարտահայտչական, ինչպես նաև ոճական-գործառական տարբերություններն առավել վառ ու պատկերավոր դրսևորվում են խոսքային միջավայրում:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առակ Ա. - Առակք Սողոմոնի որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայելի, Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկ., Ե., 1997:
Բուզ. – Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
Եզն. - Եզնկայ Կողբացւոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957:
Լաստ. – Պատմութիւն Արիստակեսի Լաստիւերտցւոյ, Ե., 1963:
Խոր. – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
Ղեւ.- Պատմութիւն Հայոց Ղեւոնդեայ Մեծի վարդապետի, Ս. Պետերբուրգ, 1888:
Սեբ. - Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Ե., 1939:

The synonymy in verbal stable compounds of old Armenian

The question of synonymy of verbal stable compounds (SC) of old Armenian are scrutinized in this article. The verbal SC of old Armenian are actively synonymized. According to their semantic and usual-stylistic aspects, the synonyms in verbal SC are distinguished by adequate, inadequate and stylistic ones. The synonymic line of SC is a synchronic language reality, which consists of two or more SC. The verbal synonymic SC realize their synonymous relations in the speech environment.